ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. հունիսի 6-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 3-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **03.06.2023թ.-ի «Սարդարապատ-08»-«Արարատի Արաքս-08» (15C2-060) անհարգելի պատճառով «Արարատի Արաքս-08» թիմի խաղին չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատի Արաքս-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

2. **02.06.2023թ.-ի «Էրեբունի-09»-«Շիրակ-2-09» (14B-089) խաղի ժամանակահատվածում 1) «Էրեբունի-09» թիմի ֆուտբոլիստ Համլետ Գալստյանի (35371) կողմից մրցակցին հարվածելը, 2) «Շիրակ-2-09» թիմի ֆուտբոլիստ Ցոլակ Պապոյանի (41504) կողմից մրցակցին հարվածելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Էրեբունի-09» թիմի ֆուտբոլիստ Համլետ Գալստյանի (35371) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Հ.Խաչատրյանի անվ մ/պ հմ/դպ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Շիրակ-2-09» թիմի ֆուտբոլիստ Ցոլակ Պապոյանի (41504) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Հ.Խաչատրյանի անվ մ/պ հմ/դպ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

Որակազրկումը տարածվում է 02.06.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

3. 02.06.2023թ.-ի «Նորք-08» - «Օնոր-08» (15C2-059) խաղին անհարգելի պատճառով «Օնոր-08» թիմի խաղին չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Օնոր» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

4. 03.06.2023թ.-ի «ԱՖԴ-09»-«Բենտոնիտ-Իջևան-09» (14C2-071) խաղին անհարգելի պատճառով«Բենտոնիտ-Իջևան-09» թիմի խաղին չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ-Իջևան-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Բենտոնիտ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի՝ 40,000 ՀՀ դրամի չափով և թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

5. 30.05.2023թ.-ի «Օնոր-09» - «ԱՐՓԻ-09» (14C1-010) «Օնոր-09» թիմի մեղքով խաղի չկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը և Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը, ինչպես նաև ակումբի կողմից ՀՖՖ ՄԿԱ բաժին ներկայացված բացատրագիրը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

6. **30.05.2023թ.-ի «Օնոր-08» - «Արարատի Արաքս-08» (15C2-039) «Օնոր-08» թիմի մեղքով խաղի չկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը և Կանոնակարգի 4-րդ հոդվածի 5-րդ կետը, ինչպես նաև ակումբի կողմից ՀՖՖ ՄԿԱ բաժին ներկայացված բացատրագիրը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով:

7. **01.06.2023թ.-ի «Վան-09»-«Կողբ Յունայթեդ-09» (14C2-069) «Կողբ Յունայթեդ-09» թիմի կողմից չհայտավորված ֆուտբոլիստի մասնակցությունը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կողբ Յունայթեդ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 37-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Կողբ ՄԱ ՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:

8. **01.06.2023թ.-ի «ԽՄՕՄՄ-09»-«Աչաջուր Յունայթեդ-09» (14B-090) խաղի ժամանակահատվածում «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանի (36683) կողմից մրցակցին հարվածելը,**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Մելսիկ Ալավերդյանի (36683) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Աչաջրի գ/պետ-ն»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

Որակազրկումը տարածվում է 01.06.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում:

9. **01.06.2023թ.-ի «Փյունիկ-Դարակերտ-09»-«Բենտոնիտ-09» (14B-089) խաղի ժամանակահատվածում «Բենտոնիտ-09» թիմի մարզիչ Գրիգոր Բալասյանի (35820) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություն թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բենտոնիտ-09» թիմի մարզիչ Գրիգոր Բալասյանի (35820) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ և «Բենտոնիտ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:

10. 28.05.2023թ.-ի «ՀՊՏՀ Երևան ֆզ»-«Թիմ ՖԱՖ» (ՖԶԲԽ-003) խաղի ժամանակահատվածում 1) «Թիմ ՖԱՖ» թիմի երկրպագուների կողմից ֆայեր վառելը, 2) «ՀՊՏՀ Երևան ֆզ» թիմի ֆուտզալիստ Դավիթ Ջիլավյանի (13110) կողմից մրցավարի օգնականի հասցեին վիրավորական արտահայտություններ և հայհոյանք թույլ տալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Թիմ ՖԱՖ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 48-րդ հոդվածի 30-րդ կետը՝ «Արարատի Արաքս ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով
2) Հաստատված համարել «ՀՊՏՀ Երևան ֆզ» թիմի ֆուտզալիստ Դավիթ Ջիլավյանի (13110) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 49-րդ հոդվածի 18-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «ՀՊՏՀ Երևան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսնապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով։

Որակազրկումը տարածվում է 28.05.2023թ.-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(երը)ը այդպիսիք լինելու դեպքում։